

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2019-10-4-Ա

ք. Երևան

24.10.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի հոկտեմբերի 24-ի նիստում քննարկեց 2019 թվականի օգոստոսի 13-ին արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ TALAGAEVA ELENA VLADIMIROVNA (kv.143, d. 3, Kommunisticheskaya St, Ramenskoye RU-140002 Moskovskaya oblast (RU)) բողոքը (IR1380188) «fito» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 93-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն և բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, քանի որ այն բաղկացած է «fito» և «kocmetik» գրառումներից, որոնցից առաջինը, չնայած գրելաձևի արտասանվում և ընկալվում է «phyto», որն նկարագրական բնույթի տարր է, իսկ երկրորդը նշում է ապրանքի տեսակը: Ինչ վերաբերում է տերևի պատկերին՝ ապա այն զուրկ լինելով յուրահատուկ ոճից և կազմելով «i» տառի բաղկացուցիչ մասը, չի կարող լրացուցիչ տարբերակիչ հատկություն հաղորդել հայտարկված ապրանքային նշանին: Անդրադառնալով Ձեր նկատառումներին, առ այն, որ հայտատուն խնդրում է դիսկլամացված ճանաչել «fito» և «kocmetik» բառային տարրերը, սույնով տեղեկացնում ենք, որ Կարգի 104-րդ կետի համաձայն, եթե չպահպանվող տարրը կազմում է

ապրանքային նշանի գերիշխող մասը, ապա եզրակացություն է արվում տվյալ նշանը որպես ապրանքային նշան գրանցելու անհնարինության մասին:

Կոլեգիայի անդամը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ հայտատուն հրաժարվել է «fito» և «kocmetik» գրառումների նկատմամբ բացառիկ իրավունք ստանալու իրավունքից և այդ չպահպանվող տարրերը կազմում են ապրանքային նշանի գերիշխող մասը: Բացի յադ ներկայացված ապրանքային նշանը չունի տարբերակիչ հատկություն քանի որ այն բաղկացած է «fito» և «kocmetik» գրառումներից, որոնցից առաջինը, չնայած գրելաձևի արտասանվում և ընկալվում է «phyto», որը նկարագրական բնույթի տարր է, իսկ երկրորդը նշում է ապրանքի տեսակը:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և շարունակում էր թիկունք կանգնել բողոքում նշված իր փաստարկներին:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «fito» (IR1380188) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ